

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ  
ИСТОРИЧЕСКИЙ ФАКУЛЬТЕТ

YEREVAN STATE UNIVERSITY  
FACULTY OF HISTORY


**ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ**  
**ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ**

**ИСТОРИЯ И КУЛЬТУРА**  
**АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ**

**HISTORY AND CULTURE**  
**JOURNAL OF ARMENIAN STUDIES**

**№ 2**

**ԵՐԵՎԱՆ - ԵՐԵՎԱՆ - YEREVAN**  
**ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ, YSU PRESS**  
**2020**



### ՀԱՍԼԵՏ ՄԱԼԽԱՍԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱԼ

Հայ պատմագիտությունը ծանր կորուստ կրեց, իր երկրային կյանքի ուղին ավարտեց Համլետ Հարությունյանը՝ պայթարող հայրենասերերը, պարզ ու շիտակ քաղաքացին և արդյունավետ գիտնականը: Դժվար է անցյալով խոսել սիրելի գիտնականի, բարի և ընկերասեր մարդու մասին: Մխիթարանքը նրա թողած գիտական հարուստ ժառանգությունն է:

Վաստակաշատ պատմաբանը ծնվել է 1948 թ. սեպտեմբերի 25-ին Հայկական ԽՍՀ Սևանի շրջանի Լճաշեն գյուղում: 1954-1966 թթ. սովորել և ավարտել է Լճաշենի միջնակարգ դպրոցը, իսկ 1973 թ.՝ ավարտել է Կիրովականի մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետը: Հ. Հարությունյանը 1969-1978 թթ. Սևանի շրջանի Գեղամավան և Լճաշեն գյուղերի միջնակարգ դպրոցներում աշխատել է որպես պատմության ուսուցիչ, ապա՝ ուսումնական մասի վարիչ: 1978 թ. հունիս-դեկտեմբերին ավագ գիտաշխատող է եղել Հայաստանի ազգագրության պետական թանգարանում, 1978 թ. դեկտեմբերից՝ ԳԱ պատմության ինստիտուտի Հին դարերի պատմության բաժնում, 1979 թ. կեսերից՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի հեղափոխության և սոցիալիստական շինարարության պատմության բաժնում: Հայաստանի խորհրդային ժամանակաշրջանի պատմության խորագիտակ մասնագետ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վ. Ղազախեցյանի ղեկավարությամբ Հ. Հարությունյանը 1982 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն, իսկ 1991 թ.՝ դոկտորական ատենախոսություն: 2005 թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

Հ. Հարությունյանը փորձառու վարչական աշխատող էր. 1994 թվականից մինչև իր անժամանակ մահը Գավառի պետական համալսարանի Պատմության ամբիոնի վարիչն էր: 2003-2005 թթ. կատարել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Հայաստանի Առաջին Հանրապետության պատմության բաժնի վարիչի, իսկ 2010 թ. հուլիսից՝ Նորագույն պատմության բաժնի վարիչի պարտականությունները:

Նա նաև ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի և Գավառի պետական համալսարանի գիտական խորհուրդների, ՀՀ ԲՈԿ-ի 004 «Հայոց պատմություն» մասնագիտական խորհրդի անդամ էր:

Չափազանց լայն էր պրոֆեսոր Հարությունյանի գիտական հետաքրքրությունների շրջանակը: Նա ուսումնասիրություններ է հրատարակել հին ու միջին դարերի<sup>1</sup>, նոր և նորագույն ժամանակաշրջանների տարբեր հիմնախնդիրների վերաբերյալ: Այդուհանդերձ, նրա գիտական վաստակը մեծապես դրսևորվել է Հայաստանի XIX և XX դդ. պատմության ուսումնասիրության բնագավառում՝ ժողովրդագրական գործընթացներ, հասարակության

<sup>1</sup> Տե՛ս «10-րդ դարի նորահայտ վիճագիր արձանագրություն Գեղարքունիքի մարզի (Սևանի ենթաշրջան) Վարսեր գյուղից», Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, Գավառ, 2000, № 4, էջ 25-27; «Լճաի գյուղը և նրա նորահայտ արձանագրությունները», նույն տեղում, էջ 28-32; «Իշտիկունի - Լճաշեն (ինագույն ժամանակներից մինչև 2006 թ.)», նույն տեղում, 2007, № 9, էջ 31-38:

սոցիալ-դասակարգային կառուցվածք, Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիր, Նոր Բայազետի գավառի պատմություն և այլն: Հեղինակ է 8 մենագրության և շուրջ 100 հոդվածի:

Արցախյան հարցի վերազարթոնքի և, հատկապես, Արցախյան պատերազմի շրջանում հայ պատմագիտության համար առանցքային խնդիր էր հիմնահարցի համակողմանի ուսումնասիրությունն ու քարոզչական դաշտում ադրբեջանական կեղծիքների բացահայտումը: 1980-ական թթ. վերջերից հայ պատմաբանները բազմաթիվ ուսումնասիրություններ են հրատարակել Արցախի պատմության վերաբերյալ: Այդ աշխատանքների շարքում կարևոր տեղ ունի Հ. Հարությունյանի «Լեռնային Ղարաբաղը 1918-1921 թթ.» մենագրությունը<sup>1</sup>, ուր լուսաբանված է այդ ժամանակահատվածում Արցախում հայկական իշխանության մարմինների ձևավորման գործընթացը, երկրամասի հայության համագումարները, թուրք և ադրբեջանցի նվաճողների դեմ համառ պայքարը, Անտանտի տերությունների ու Խորհրդային Ռուսաստանի քաղաքականությունը, Լեռնային Ղարաբաղը Խորհրդային Ադրբեջանին բռնակցելու գործընթացը: Պատմաբանների կողմից այս աշխատությունը, իրավամբ, համարվում է արցախյան թեմատիկայով հայրենական պատմագիտության առանցքային ուսումնասիրություններից մեկը: Հրատարակվել են Հ. Հարությունյանի «Նոր Բայազետի գավառը 1828-1913 թթ.», «Նոր Բայազետի գավառը 1914-1920 թթ.» և «Նոր Բայազետի գավառը 1920-1930 թթ.» մենագրությունները<sup>2</sup>: Անվանի պատմաբանի այս հատորները կարող են նախադեպ դառնալ Հայաստանի այլ տարածաշրջանների պատմությունը շարադրողների համար:

Հ. Հարությունյանը հրատարակության էր պատրաստում «Երևանի նահանգը 1849-1917 թվականներին» վերնագրով մենագրությունը, բայց անժամանակ մահը, ցավոք, հնարավորություն չտվեց ավարտին հասցնել աշխատությունը: Սակայն ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի աշխատակիցների տքնաջան աշխատանքի շնորհիվ 2020 թ. սեպտեմբերին հրատարակվեց գիտնականի անավարտ աշխատությունը՝ որպես հարգանքի տուրք նրա հիշատակին<sup>3</sup>: Աշխատությունում ուսումնասիրվում են նահանգի ստեղծման, նրա վարչատարածքային կառուցվածքի, հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական և մշակութային զարգացման հիմնահարցերը: Մենագրությունը հույժ արդիական է՝ կապված այն իրողության հետ, որ մեր ռիսերիմ հարևանները փորձում են «ապացուցել», թե իբր Երևանի նահանգը հայաբնակ չի եղել նախքան 19-րդ դ. 20-ական թթ. ավարտը:

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի կողմից հրատարակության պատրաստված «Հայոց պատմության» Նոր ակադեմիական հրատարակության Դ հատորի երկու գրքերում (որից վերջինի պատասխանատու խմբագիրն էր) տեղ են գտել նաև անվանի պատմաբանի հեղինակած տեքստերը: Նա նաև մի շարք դասագրքերի համահեղինակ էր:

Համլետ Հարությունյան մեծ հայրենասեր էր, ով ուներ լայն աշխարհայացք, համոզիչ խոսք, սուր միտք: Եվ պատահական չէ, որ նա մեծ կարևորություն էր տալիս հայոց բանակի ռազմահայրենասիրական դաստիարակությանը: Նա ամեն անգամ մեծ խանդավառությամբ էր այցելում Արցախի տարբեր զինվորական ստորաբաժանումներ և դասախոսություններ կարդում զինվորների համար:

Նա բարեխիղճ գիտական ղեկավար էր: Նրա ղեկավարությամբ թեկնածուական ատենախոսություններ են պաշտպանել շուրջ մեկ տասնյակ երիտասարդ ուսումնասիրողներ, նա եղել է թեկնածուական և դոկտորական մի շարք ատենախոսությունների ընդդիմախոս:

<sup>1</sup> Տե՛ս «Լեռնային Ղարաբաղը 1918-1921 թթ.», Ե., ՀՀ ԳԱԱ հրատ., 1996:

<sup>2</sup> Տե՛ս «Նոր Բայազետի գավառը 1828-1913 թթ.», Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2008; «Նոր Բայազետի գավառը 1914-1920 թթ.», Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2012; «Նոր Բայազետի գավառը 1920-1930 թթ.», Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2015:

<sup>3</sup> Տե՛ս Հարությունյան Հ., Երևանի նահանգի վարչաժողովրդագրական պատկերը, արհեստներն ու առևտուրը, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, Ե., 2020:

Յ. Յարությունյանը, բացի Գավառի պետական համալսարանից, դասախոսել և հատուկ դասընթացներ էր վարել նաև Երևանի պետական, Յայաստանի ագրարային, Յայաստանի տնտեսագիտական, Վանաձորի Յովհ. Թումանյանի անվան մանկավարժական և «Յրաչյա Աճառյան» համալսարաններում: Վերջին տարիներին նա «Յայոց պատմության հիմնահարցեր» խորագրով հատուկ դասընթաց էր կարդում ՅՅ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի «Միջազգային հարաբերություններ» մասնագիտությամբ մագիստրանտների համար: Վերոնշյալ ուսումնական հաստատություններից մի քանիսում, նաև Վանաձորի պետական համալսարանում, բազմիցս եղել է պետական ավարտական քննական հանձնաժողովի նախագահ:

Յ. Յարությունյանը մասնակցել է հայագիտական միջազգային բազմաթիվ գիտաժողովների, նախագահել է դրանց տարբեր մասնաճյուղերը, հանդես եկել ուշագրավ զեկուցումներով:

Պրոֆեսոր Յամլետ Յարությունյանը ժպտադեմ, բարեհամբույր, պարկեշտ, ազնիվ և սրտաբաց մարդ էր, միշտ օգնության պատրաստ: Նրա՝ կարեկցող ընկերոջ, գիտության անխոջ մշակի պայծառ հիշատակը միշտ վառ կմնա հարազատների, գործընկերների, ուսանողների և բոլոր նրան ճանաչողների սրտերում:

Յայկ Մարտիրոսյան